



57. ԱՆԳԵՏ ԳԵՂԱՑԻՆ

Փաշենն ուր էրկրենն տուրք հա՛մ փարա կառնեբ, հա՛մ եղ կառ-
ւեբ:

Տարի մե ցալ գրնկնա մըջ տավրին, կթան կը պակսի, եղ լե
կը պակսի, չըն կռնա եղ տա: Գելնան մարդ մե կը ճամպին մըտ
փաշենն, խնդիրք էնին, օր էդ տարին եղ շառնե, յան օր կառնե, պա-
կաս առնե:

Մարդն օր գելնա փաշի յառջև, գըվնի շորս ճոթ կը կորցու,
կըսե.

— Փա՛շա, էրկրով-էրկիր ըռջա կէնին քըզնե:

— Ի՞նչ ըռջա:

— Յըստարի հալուկ ե՞ղ տան, թե՞ անհալ:

— Հա՛ յդե կորի, գնա՛ ըսե հալուկ եղ տան:

Մարդ կը դառնա գիկա. ժողովուրդ քոմով գելնան յառեշ, կը
հարդոն.

— Ի՞նչ էրիր, գեղ պակսըցուցի՞ր, թե չէ:

— Տո՛, ի՛նչ էրի, անջախ գանհալն էրի հալուկ ու էկա:

Գեղացիք կը վարմանան վըր ըդոր անգիտութենին: Հալվոր մե
ըդոց կըսե.

— Մեծորաց խոսք է, օղորդ ին ըսի՝ էն շուն, օր հաշալ չը դի-
նա՝ զգել կը բերե վըր օշխըրի ճղին:

